ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

22.12.23 N 4/9/06.3/29812-23
Ձեր N _____

«ԹԵՈՖԱՐՄԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ՎԱՀՐԱՄ ՄԱԿԻՆՅԱՆԻՆ
էլ փոստ՝ tender@theopharma.am

Հարգելի պարոն Մակինյան,

Հայտնում եմ, որ Առողջապահության նախարարության և «ԹԵՈՖԱՐՄԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊ ընկերության միջև 22.12.2022թ.-ին կնքված թիվ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/10-1» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում ընկերությունը չի կատարել Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, մասնավորապես՝ ընկերությունը 21.02.2023թ. կնքված Պայմանագրի թիվ 1 համաձայնագրով սահմանված ժամկետներում և քանակներով չի մատակարարել 12-րդ չափաբաժնով «Մետոտրեքսատ 500մգ/մլ խտանյութ կաթիլաներարկման լուծույթի» և 24-րդ չափաբաժնով «Իֆոսֆամիդ 1000մգ/մլ ներարկման սրվակ» դեղերը:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը, Պայմանագրի 2.1.7 և 8.11 կետերը՝ նախարարությունը միակողմանի լուծում է «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/10-1» ծածկագրով Պայմանագիրը՝ 12-րդ և 24-րդ չափաբաժիններով:

Տեղեկացնում եմ, որ Պայմանագրի 6.2 կետով սահմանված տույժի չափը կազմում է 181 472 (մեկ հարյուր ութսունմեկ հազար չորս հարյուր յոթանասուներկու) ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել 5 աշխատանքային օրվա ընթացքում Ֆինանսների նախարարության գանձապետական 900005028106 հաշվեհամարին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով

նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում վճարման ենթակա՝ պայմանագրի որակավորման ապահովման գումարը կազմում է 496 053 (չորս հարյուր իննսունվեց հազար հիսուներեք) ՀՀ դրամ, պայմանագրի ապահովման գումարը՝ 330 702 (երեք հարյուր երեսուն հազար յոթ հարյուր երկու) ՀՀ դրամ, որոնք պետք է վճարվեն համապատասխանաբար ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական 900008000664 և 900005000758 հաշվեհամարներին:

Միաժամանակ հայտնում եմ, որ եթե մինչև 2023թ դեկտեմբերի 28-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված տույժերը, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ապա ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Վճարման հանձնարարագրերի անդորագրերի բնօրինակները մինչև 2023թ դեկտեմբերի 29-ը ներառյալ անհրաժեշտ է ներկայացնել Առողջապահության նախարարություն:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՎԱՐԴԱՆՈՒՇ ԳՐԻԳՈՐՅԱՆ

22.12.2023

X

ՌՈՒԲԵՆԻ ՎԱՐԴԱՆՈՒՇ

Signed by: GRIGORYAN VARDANUSH 6802780100

Կատարող Արմինե Գալուստյան
Ֆինանսատնտեսագիտական վարչության
Գնումների համակարգման բաժին
հեռ. 060 80 80 03 (17-02)